ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«_____» _____ 2026թ. N -Ն

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 23-Ի N 463-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածով.

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Երևան քաղաքի ավագանու 2025 թվականի դեկտեմբերի 23-ի «Երևան քաղաքի սեփականություն հանդիսացող գույքը օգտագործման տրամադրելու և օտարման 2026 թվականի ծրագրի (ներառյալ՝ իրավաբանական անձի կանոնադրական կապիտալում համայնքի մասնակցության) վերաբերյալ» N463-Ն որոշման 1-ին կետով հաստատված հավելվածի 6-րդ գլխի աղյուսակը լրացնել նոր՝ 51-80-րդ կետերով՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ

Հավելված
Երևան քաղաքի ավագանու
2026 թվականի հունիսի ---ի
N----Ն որոշման

51.	Աջափնյակ	01-001-0007-0110	Բնակավայրերի	Ընդհանուր օգտագործման	Կիևյան-Հալաբյան հատված	
52.	Ավան	01-002-0006-0013	Բնակավայրերի	Հասարակական կառուցապատման	Մ.Խուդյակով, հ.175/3	
53.	Արաբկիր	01-003-0112-0001	Բնակավայրերի	Ընդհանուր օգտագործման	Փափազյան-Հ.Քոչար հատման հատված	
54.	Արաբկիր	01-003-0223-0001	Բնակավայրերի	Ընդհանուր օգտագործման	Կոմիտաս-Տիգրանյան հատման հատված	
55.	Արաբկիր	01-003-0014-0124	Բնակավայրերի	Բնակելի կառուցապատման	Հ. Էմին 17 հասցեին կից	
56.	Արաբկիր	01-003-0014-0326	Բնակավայրերի	Բնակելի կառուցապատման	Հ. Էմին 17 հասցեին կից	
57.	Կենտրոն	01-006-0407-0034	Բնակավայրերի	Ընդհանուր օգտագործման	Մաշտոցի պողոտա, N 37/6 հասցեին կից	
58.	Կենտրոն	01-006-0016-0002	Բնակավայրերի	Ընդհանուր օգտագործման	Կորյունի փողոց, 16/2	
59.	Էրեբունի	01-005-0848-0001	Արդյունաբերական, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողեր	Ընդերքի օգտագործման հողեր	Դավիթ Բեկի փողոց հ.87	
60.	Էրեբունի	01-005-0848-0002	Արդյունաբերական, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողեր	Ընդերքի օգտագործման հողեր	Դավիթ Բեկի փողոց հ.87	

61.	Էրեբունի	01-005-0849-0001	Արդյունաբերական, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողեր	Ընդերքի օգտագործման հողեր	Դավիթ Բեկի փողոց հ.87	
62.	Էրեբունի	01-005-1426-0001	Արդյունաբերական, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողեր	Ընդերքի օգտագործման հողեր	Դավիթ Բեկի փողոց հ.87	
63.	Էրեբունի	01-005-1427-0001	Արդյունաբերական, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողեր	Ընդերքի օգտագործման հողեր	Դավիթ Բեկի փողոց հ.87	
64.	Էրեբունի	01-005-1428-0001	Արդյունաբերական, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողեր	Ընդերքի օգտագործման հողեր	Դավիթ Բեկի փողոց հ.87	
65.	Էրեբունի	01-005-1429-0001	Արդյունաբերական, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողեր	Ընդերքի օգտագործման հողեր	Դավիթ Բեկի փողոց հ.87	
66.	Կենտրոն	01-006-0619-0021	Բնակավայրերի	Հասարակական կառուցապատման	Ծիծեռնակաբերդի խճուղի N 2/10 հասցեին կից	
67.	Կենտրոն	01-006-0619-0023	Բնակավայրերի	Հասարակական կառուցապատման	Ծիծեռնակաբերդի խճուղի N 2/10 հասցեին կից	
68.	Շենգավիթ	01-011-0304-0156	Բնակավայրերի	Հասարակական կառուցապատման	Ե.Թադևոսյան փողոց 11/7 պահեստ	

69.	Շենգավիթ	01-011-0118-0122	Բնակավայրերի	Բնակելի կառուցապատման	Արտաշիսյան 3-րդ նրբ. հ.16	
70.	Կենտրոն	01-006-0525-0003	Բնակավայրերի	Բնակելի կառուցապատման	Ամիրյան, Սարյան, Բուզանդի փողոցներով սահմանափակված տարածք	
71.	Կենտրոն	01-006-0525-0002	Բնակավայրերի	Բնակելի կառուցապատման	Ամիրյան, Սարյան, Բուզանդի փողոցներով սահմանափակված տարածք	
72.	Կենտրոն	01-006-0525-0097	Բնակավայրերի	Բնակելի կառուցապատման	Ամիրյան, Սարյան, Բուզանդի փողոցներով սահմանափակված տարածք	
73.	Կենտրոն	01-006-0525-0004	Բնակավայրերի	Բնակելի կառուցապատման	Ամիրյան, Սարյան, Բուզանդի փողոցներով սահմանափակված տարածք	
74.	Կենտրոն	01-006-0525-0096	Բնակավայրերի	Բնակելի կառուցապատման	Ամիրյան, Սարյան, Բուզանդի փողոցներով սահմանափակված տարածք	
75.	Կենտրոն	01-006-0525-0048	Բնակավայրերի	Բնակելի կառուցապատման	Ամիրյան, Սարյան, Բուզանդի փողոցներով սահմանափակված տարածք	
76.	Կենտրոն	01-006-0525-0047	Բնակավայրերի	Բնակելի կառուցապատման	Ամիրյան, Սարյան, Բուզանդի փողոցներով սահմանափակված տարածք	
77.	Կենտրոն	01-006-0525-0011	Բնակավայրերի	Բնակելի կառուցապատման	Ամիրյան, Սարյան, Բուզանդի փողոցներով սահմանափակված տարածք	

78.	Կենտրոն	01-006-0525-0037	Բնակավայրերի	Բնակելի կառուցապատման	Ամիրյան, Սարյան, Բուզանդի փողոցներով սահմանափակված տարածք	
79.	Կենտրոն	01-006-0525-0005	Բնակավայրերի	Բնակելի կառուցապատման	Ամիրյան, Սարյան, Բուզանդի փողոցներով սահմանափակված տարածք	
80.	Էրեբունի	01-005-0313-0017	Բնակավայրերի	Բնակելի կառուցապատման	Դավիթ Բեկի թաղամաս հ.87բնակելի տուն և Դավիթ Բեկի թաղամաս հ.85 բնակելի տուն հասցեներին հարակից	

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք – Հ Ի Մ Ն Ա Վ Ո Ր Ո Ւ Մ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 23-Ի N 463-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

1. **Խնդրի սահմանումը**

«Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետի համաձայն՝ Երևան քաղաքի ավագանին որոշում է ընդունում Երևանի սեփականություն հանդիսացող գույքը օգտագործման տրամադրելու և օտարման տարեկան ծրագրի վերաբերյալ, որում նշված են օգտագործման տրամադրման կամ օտարման եղանակը, ժամկետները, նպատակը, օգտագործման տրամադրման դեպքում՝ օգտագործման ժամկետը և վճարի չափը, ուղղակի վաճառքի դեպքում՝ վաճառքի գինը, իսկ հրապարակային սակարկությունների դեպքում՝ մեկնարկային գինը, ընդ որում՝ հողամասերի օտարման տարեկան ծրագրի մեջ պետք է նշվեն նաև հողամասերի գտնվելու վայրը, ծածկագրերը:

2. **Առկա իրավիճակը**

Երևանի ավագանու 2025 թվականի դեկտեմբերի 23-ի N 463-Ն որոշման հավելվածի 48-րդ կետով 2026 թվականին օտարման և (կամ) օգտագործման տրամադրման համար առաջարկվող գույքի կազմում ներառվել են Երևան քաղաքի ավագանու որոշումներով հաստատված Երևան քաղաքի սեփականություն համարվող գույքն օգտագործման տրամադրելու և օտարման 2010-2025 թվականների ծրագրերում ընդգրկված, սակայն դեռևս չօտարված Երևան համայնքին սեփականության իրավունքով պատկանող գույքը և հողամասերը: Միաժամանակ ցանկում չներառված հողամասերի ծածկագրերը հնարավորություն չեն տալիս անհրաժեշտության դեպքում այն օգտագործման տրամադրել կամ օտարել:

3.Կարգավորման նպատակը

Նախագծով Երևան քաղաքի ավագանու 2025 թվականի դեկտեմբերի 23-ի N 463-Ն որոշման հավելվածում կատարվող լրացումներով ցանկը լրացվում է նոր ծածկագրերով:

4. **Ակնկալվող արդյունքը**

Երևան քաղաքի ավագանու 2025 թվականի դեկտեմբերի 23-ի N 463-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու արդյունքում հավելվածը կավելացվի նոր ծածկագրերով, որի արդյունքում կավելանա Երևան համայնքի բյուջեի մուտքերը: Որոշման ընդունումը նպատակաուղղված է համայնքային գույքի հետագա օգտագործման արդյունավետության բարձրացմանը:

5.Նորմատիվ բնույթի հիմնավորվածությունը

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ նորմատիվ իրավական ակտում փոփոխություն կամ լրացում կարող է կատարել միայն նույն տեսակի և բնույթի նորմատիվ իրավական ակտով:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ